ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴԳԱՐ ՍՈՒՐԵՆԻ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՌՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

Երևան - 2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КАРАПЕТЯН ЭДГАР СУРЕНОВИЧ

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА НАСИЛЬСТВЕННЫХ ПОЛОВЫХ ПРЕСТУПЛЕНИЙ В ОТНОШЕНИИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности: 12.00.05-«Уголовное право и криминология, уголовно-исполнительное право»

Ереван - 2019

Ատենախոսության թեման հաստավել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Տ. Վ. Սիմոնյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Հ. Գաբուզյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Կ. Վարդապետյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի փետրվարի 12-ին՝ ժամը 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2019 թվականի դեկտեմբերի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավ. գիտ. թենածու, դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук, доцент **Т. В. Симонян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **А.А. Габузян**

кандидат юридических наук **А. К. Вардап етян**

Ведущая организация: **Образовательный комплекс Полиции РА**

Защита состоится 12-ого февраля 2020 г. в 14^{30} часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК РА при ЕГУ (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 13 декабря 2019г.

Учений секретар специализированного совета,
кандидат юридических наук, доцент **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Իրավական պետության կառուցման գործում կարևորագույն դեր ունի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ մարդը բարձրագույն արժեք է (հոդված 3), մարդու արժանապատվությունն անխախտելի է (հոդված 23), յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք (հոդված 24), յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք (հոդված 25)…: Սակայն հարկ է նշել, որ որոշակի խումբ անձինք, ելնելով իրենց տարիքային առանձնահատկություններից, ենթակա են առավել մեծ ուշադրության և պաշտպանության պետության և հասարակության կողմից: Խոսքն անչափահասների (երեխաների) մասին է, որոնց պաշտպանվածության աստիճանով կարելի է որոշել տվյալ հասարակության զարգացվածության և դրանում առկա իրավական մշակույթի աստիճանը: Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի առաջին հոդվածի համաձայն՝ «Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո…»: Այս դրույթները հիմնվում են միջազգային իրավական մի շարք նորմերի վրա (Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (20 նոյեմբերի 1989), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվեցիա, 7-րդ արձանագրություն (4 նոյեմբերի 1950), Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 25-ի երկրորդ մաս (10 դեկտեմբերի, 1948թ.) և այլն): Չնայած ներպետական և միջազգային իրավական բազմաթիվ և բազմաբովանդակ երաշխիքների առկայությանը, երեխաների իրավունքները ողջ աշխարհում ոտնահարվել և այսօր էլ ոտնահարվում են, երեխաների նկատմամբ կատարվում են բազմաթիվ հանցագործություններ, այդ թվում՝ ուղղված վերջիններիս սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ: Այս բացասական միտումներից զերծ չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 34-ը նշում է, որ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ներպետական, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն.

(ա) երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,

(բ) շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը,

(գ) շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:

Երեխաների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունները մարդկային վարքաքծի առավել դաժան, անողոք և նողկալի դրսևորումներից են և դրանց դեմ պայքարը պետք է առաջնահերթություն հանդիսանա յուրաքանչյուր պետության համար: Այս տեսակի հանցագործությունների արդյունավետ կանխարգելման մեխանիզմում պետք է օգտագործվեն պետության գործիքակազմի բոլոր հնարավորությունները: Անհրաժեշտ է ապահովել պետական և հասարակական կազմակերպությունների սերտ համագործակցությունը, քանզի միայն համապետական, համահասարակական և անհատական ջանքերի շնորհիվ է հնարավոր որոշակի հաջողություններ գրանցել լատենտային հանցավորության նշված դրսևորման դեմ:

Քրեահրավական տեսության մեջ արդարացիորեն նշվում է, որ անչափահասների նկատմամբ սեռական բռնությունը դարձել է ժամանակակից հասարակության պատուհասը: Տարեցտարի պաշտոնական վիճակագրության մեջ այս հանցագործությունների քանակն ավելանում է, սակայն իրականում դրանք շատ ավելի շատ են:

ՀՀ-ում հանցավորությանը վերաբերող վիճակագրական նյութի ուսումնասիրությունը փաստում է, որ ինչպես հանցավորությունն ընդհանրապես, այնպես էլ անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունները, մասնավորապես, վերջին տարիներին դրսևորում են աճի միտումներ, ինչը խիստ բացասական և մտահոգիչ գործընթաց է: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունները ավանդաբար դասվում են առավել լատենտային հանցագործությունների թվին, ապա պատկերն իրոք անհանգստացնող է: Երեխաների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների ճիշտ որակման և համանման հանցատեսակներից տարբերակման առումով առկա են տեսական և գործնական բազմաթիվ խնդիրներ, օրենսդրական բացեր: Այս առումով հարկ է նկատել, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում փորձ է կատարվել շտկելու գործող քրեական օրենսգրքում առկա մի շարք խնդիրներ և դա պետք է, միանշանակ, դրական գնահատել: Սակայն, իմ կարծիքով, առկա են մի շարք քրեահրավական նորմեր, որոնք ունեն կատարելագործման և լրամշակման կարիք, որպեսզի հնարավոր լինի իրականացնել անչափահասների սեռական ազատության և անձեռնմխելիության իրավունքի համապարփակ քրեահրավական պաշտպանություն:

Այսպիսով՝ ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների բարձր հանրային վտանգավորությամբ, տարածվածությամբ, դրանց դեմ պայքարի գործուն իրավական մեխանիզմների մշակման, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսդրության մեջ առկա մի շարք իրավակարգավորումների լրամշակման անհրաժեշտությամբ: Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործություններին առնչվող բազմաթիվ տեսական հիմնահարցեր խիստ վիճելի են, ուստի անհրաժեշտ է դրանք քննարկել և վերաիմաստավորել քրեական իրավունքի ժամանակակից զարգացման միտումների համատեքստում՝ նպաստելով իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսական հետազոտության օբյեկտն այն հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որոնք ծագում են քրեաիրավական միջոցներով անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների դեմ պայքարի կազմակերպման գործընթացում: Հետազոտության առարկան են կազմում երեխայի դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն սահմանող իրավանորմերի ներպետական և արտասահմանյան կարգավորումները, այս հանցատեսակի արդի միտումները և իրավակիրառական պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակը անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների տարբեր դրսևորումների և առանձնահատկությունների ուսումնասիրությունն է, քննարկվող հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավանորմերի օրենսդրական կատարելագործմանը և լրամշակմանը միտված առաջարկների մշակումը: Այս նպատակին հետմուտ՝ փորձ է կատարվել լուծելու հետևյալ խնդիրները՝

1) ուսումնասիրել ՀՀ քրեական օրենսդրությամբ անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության նախատեսման հիմքերն ու պայմանները,

2) համեմատական վերլուծության ենթարկել անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների ՀՀ և արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները, այն հաշվով, որպեսզի արտասահմանյան դրական փորձը հնարավոր լինի տեղայնացնել և ներդնել հայրենական քրեական օրենսդրության մեջ,

3) համակողմանի վերլուծության ենթարկել անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, վեր հանել այս հանցատեսակների բովանդակության և կառուցվածքի առանձնահատկությունները

4) ուսումնասիրել քննարկվող հանցատեսակների որակյալ դրսևորումները,

5) մշակել անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների որակման և այլ համանման հանցակազմերից տարբերակման գործնական առաջարկներ,

6) ներկայացնել առաջարկություններ՝ միտված ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխում նախատեսված մի շարք հանցակազմերի լրամշակմանը, հիմնավորել քրեական օրենսդրությամբ մի շարք հասկացությունների նախատեսման և վերաձևակերպման անհրաժեշտությունը:

7) Ուսումնասիրել և ընդհանրացնել անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների գործերով դատահիրավական պրակտիկայի նյութերը, վիճակագրական տվյալները, բացահայտել, քննարկվող հանցատեսակների արդի միտումները:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքն են կազմում ձևական-տրամաբանական, դիալեկտիկական, համակարգային-կառուցվածքային, համեմատահիրավական, փաստաթղթերի ուսումնասիրության, իրավական մոդելավորման համագիտական և մասնավոր-գիտական մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքը: Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական առանձին հիմնահարցեր քննարկվել են մի շարք հայրենական և արտասահմանյան տեսաբանների կողմից, ինչպիսիք են՝ Ա.Ա. Պիոնտկովսկին, Ա.Ի. Բոյցովը, Ա.Հ. Գաբուզյանը, Ա.Մ. Յակովլևը, Ա.Ռ. Մարգարյանը, Ա.Ս. Գորելիկը, Բ.Ս. Նիկիֆորովը, Բ.Վ. Վոլժենկինը, Գ.Ն. Բորզենկովը, Ի.Դ. Կոզոչկինը, Լ.Դ. Գաուխմանը, Լ.Հ. Գառեթը, Հ.Մ. Խաչիկյանը, Յու.Ի. Լյապունովը, Յու.Մ. Անտոնյանը, Ն.Ա. Լոպաշենկոն, Ն.Վ. Սիչովան, Ս.Մ. Կոչոյը, Ս.Վ. Առաքելյանը, Վ.Ա. Վլադիմիրովը, Վ.Ի. Պլոխովը, Վ.Ն. Կուդրյավցևը, Վ.Վ. Վեկլենկոն, Տ.Վ. Սիմոնյանը և ուրիշներ: Սակայն անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների հիմնախնդիրների համակողմանի տեսական ուսումանասիրություն ՀՀ-ում չի իրականացվել:

Ուսումնասիրության փորձառնական հիմքն են կազմել ՀՀ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տրամադրած տվյալները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայքերում զետեղված վիճակագրական տեղեկատվությունը, ինչ-

պես նաև ՀՀ քննչական և դատական պրակտիկայի նյութերը:

Հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Սույն հետազոտության շրջանակներում ՀՀ-ում առաջին անգամ փորձ է կատարվել համակողմանիորեն ուսումնասիրել անչափահասների (երեխաների) նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական հիմնախնդիրները, մշակել առաջարկություններ՝ միտված ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխում նախատեսված մի շարք քրեաիրավական նորմերի կատարելագործմանը և լրամշակմանը, արտասահմանյան դրական փորձի տեղայնացմանը, ինչպես նաև վիճակագրական տվյալների և դատաիրավական պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա ներկայացվել են քննարկվող հանցատեսակների արդի միտումները և դրանց կանխարգելման քրեաիրավական մեխանիզմները:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում, որոնք հանգում են հետևյալին.

1. Ակնհայտ է, որ ներթափանցմամբ զուգորդված սեռական բռնությունն օժտված է ավելի բարձր հանրային վտանգավորությամբ և այս հանգամանքը չպետք է անտեսվի օրենսդրի կողմից: Օրենսդրորեն պետք է սահմանվեն այն հստակ չափորոշիչները, որոնց հիման վրա հնարավոր կլինի տարբերակել սեռական բնույթի բռնի գործողությունները և բռնությամբ զուգորդված անառակաբարո գործողությունները: Նման իրավակարգավորումը թույլ կտա կենսագործել իրավական որոշակիության սկզբունքը և կնպաստի հանցագործությունների ճիշտ որակմանը: Բանն այն է, որ սեքսոլոգիայում սեքսուալ բնույթի գործողությունների միասնական հասկացություն գոյություն չունի, դրանք կարող են ամենաբազմազան բնույթ ունենալ, իսկ քրեական օրենսդրության մեջ նման անորոշ հասկացության կիրառումն անընդունելի է: Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում (ինչպես նաև նոր քրեական օրենսգրքի նախագծում) կատարել համապատասխան փոփոխություն՝ նշելով, որ սեռական բնույթի բռնի գործողությունները պետք է կապված լինեն տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցման հետ: Հետևաբար՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 139-ը վերախմբագրել հետևյալ կերպ՝ «Սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները, որոնք զուգորդվել են տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ և կատարվել են տուժողի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու՝ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով...»:

2. Համեմատական վերլուծության հիման վրա՝ առաջարկվում է ՀՀ ք-

ռական օրենսգրքի հոդվածներ 138-ի և 139-ի երրորդ մասի առաջին կետով նախատեսված որակյալ տեսակը լրամշակել և ձևակերպել հետևյալ կերպ. «Տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի, վերընթաց ազգականի, մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն կամ ումից երեխան գտնվում է աշխատանքային կամ ծառայողական կախվածության մեջ»:

3. Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում սեռական հանցագործությունների մեծամասնությունը կատարվում է անչափահասների նկատմամբ: Ինչ վերաբերում է անչափահասների նկատմամբ կատարված բռնի սեռական հանցագործություններին, ապա դրանց ծավալը կազմում է ընդհանուր հանցավորության տեսակարար կշռի 0.1-0.2%-ը, սակայն, այս առումով նկատելի են բացասական միումներ, քանի որ, ընդհանուր առմամբ, նկատվում է հանցավորության այս դրսևորման աճ: Հարկ է նկատել, որ ի տարբերություն ԱՊՀ մի շարք երկրների, որտեղ սեռական հանցագործությունների տեսակարար կշիռն ընդհանուր հանցավորության ծավալում կազմում է 2-4 %, ՀՀ-ում, ըստ պաշտոնական վիճակագրության, այս առումով պատկերն էապես և դրականորեն տարբերվում է: Սակայն կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են մի շարք բացասական միտումներ, որոնք կարող են մոտեցնել հանցավորության այս դրսևորման ծավալը տարածաշրջանի այլ երկրների ցուցանիշներին:

4. Առաջարկվում է կատարել օրենսդրական փոփոխություն և որպես «անօգնական վիճակի տարիք» սահմանել 14 տարեկանը: Տասնչորս տարին չլրացած անձանց ներքաշումը սեռական հարաբերությունների ոլորտ, անգամ վերջիններիս համաձայնությամբ, կարող է բացասական և անդառնալի հետևանքներ ունենալ նրանց ֆիզիկական, բարոյական և հոգեկան զարգացման վրա: Այս համատեքստում 14 տարին չլրացած անձը կարող է համարվել անօգնական վիճակում գտնվող: Սա բխում է նաև մեր ազգային առանձնահատկություններից, խառնվածքից և հայկական դաստիարակության յուրահատկություններից: Սահմանելով տասներկու տարեկանը՝ ՀՀ օրենսդրի կողմից հաշվի են առնվել արտասահմանյան սեքսոլոգիական գրականությունում արտահայտված մոտեցումները, որոնք, մեր պարագայում, չպետք է նույնությամբ կիրառվեն:

5. ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերը միավորվել են և նախատեսվել է մեկ հանցակազմ՝ «Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները»: Սակայն բռնաբարության հանրային վտանգավորությունը, մի շարք

պատճառներով, գերազանցում է սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանրային վտանգավորությանը: Նախ՝ բռնաբարությունը կարող է հանգեցնել անցանկալի հղիության, իսկ այնուհետև նաև աբորտի, որը լրջագույն վտնագ է կնոջ՝ հատկապես անչափահասի, առողջության համար: Անչափահասների բռնաբարությունը կարող է էապես խաթարել վերջիներիս օրգանիզմի ռեպրոդուկտիվ ֆունկցիան՝ հետագայում հանգեցնելով անպտղության: Նման փաստարկները բազմաթիվ են և, հետևաբար, բռնաբարության հանցակազմի առանձին նախատեսումն անհրաժեշտ է: Ընդ որում՝ բռնաբարության և դրա որակյալ տեսակների (հատկապես անչափահասի և մանկահասակի բռնաբարության) համար սանկցիաները պետք է ավելի խիստ լինեն, քան սեքսուալ բնույթի բռնի գործողության համար նախատեսված սանկցիաները:

6. Անօգնական վիճակի օգտագործումը ևս պետք է նախատեսել որպես անառակաբարո գործողությունների ծանրացնող հանգամանք և հոդված 142-ի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով...»: Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսել բռնի անառակաբարո արարք կատարելու հանցակազմը: Բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև տուժողի անօգնական վիճակն օգտագործելով անառակաբարո գործողություններ կարող են կատարվել նաև չափահասների նկատմամբ, մինչդեռ առկա իրավակարգավորման պարագայում այդ արարքներին չի տրվում քրեաիրավական գնահատական: Առաջարկվում է հետևյալ խմբագրությամբ նոր հանցակազմ նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխում (Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ)՝ «Անառակաբարո արարքի կատարումը, որը չի զուգորդվել տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ և կատարվել է տուժողի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով...»: Ընդ որում այս հանցատեսակի համար պետք է սահմանել նույն որակյալ տեսակները, որոնք առկա են բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերում:

7. Անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն, սահմանելով, որ անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունը չի կարող որակվել ծանրացնող հանգամանքով, եթե սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողության մասնակիցների տարիքային տարբերությունը չի գերազանցում երկու տարին:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատե-

նախոսական հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես տեսական, այնպես էլ գործնական նպատակներով: Սույն աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել «Քրեական իրավունք» դասընթացի դասավանդման ժամանակ, ինչպես նաև կարող են օգտակար լինել անչափահասների (երեխաների) դեմ ուղղված, ինչպես նաև սեռական հանցագործությունների տեսական և գործնական հիմնահարցերով հետաքրքրվող անձանց համար: Ատենախոսության շրջանակներում արված առաջարկությունները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործման համար: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել որպես անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարի գործնական ուղեցույց:

Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ անցկացվել են դրա քննարկումն ու գրախոսությունը: Ատենախոսության առավել կարևոր դրույթները տեղ են գտել հեղինակի հրապարակումներում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում ներկայացված զեկույցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, աշխատանքի նպատակը և խնդիրները, մեթոդաբանական, տեսական և փորձառնական հիմքերը, բացահայտվում է հետազոտության գիտական նորույթը, ձևակերպվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, կարևորվում է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվում է ուսումնասիրության արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **(Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների ընդհանուր բնութագիրը)**, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում՝ **(Անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը և տեսակները)** ներկայացվում է սեռական հանցագործությունների հասկացությունը, դրանց առնչվող տեսական հիմնախնդիրները:

Տրվում են «սեռական անձեռնմխելիություն» և «սեռական ազատություն» հասկացությունների բնութագրերը, քննարկվում են տեսության մեջ դրանց առնչվող բազմաթիվ հայեցակարգեր ու տեսակետներ: Քննարկվում են սեռական հանցագործությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, այս համատեքստում անդրադարձ է կատարվում միջազգային իրավական և կոնվենցիոնալ մի շարք իրավակարգավորումների, ուսումնասիրվել են սեռական հանցագործությունների վերաբերյալ մի շարք արտասահմանյան հայեցակարգեր: Կատարված ուսումնասիրության հիման վրա առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսել սեռական հանցագործությունների բնորոշումը:

Աշխատանքի երկրորդ պարագրաֆում՝ **(Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների համար սահմանված քրեական պատասխանատվության առանձնահատկությունները արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ)** անդրադարձ է կատարվել մի շարք արտասահմանյան երկրներում անչափահասների (երեխաների) նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների և հատկապես բռնությամբ զուգորդված սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագրի և օրենսդրական ձևակերպումների առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Բազմաթիվ արևմտաեվրոպական երկրների, ԱՊՀ անդամ երկրների, ինչպես նաև զարգացած իրավական մշակույթ ունեցող մի շարք այլ երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի, Ճապոնիայի, ՉԺՀ-ի օրենսդրական և իրավակիրառ փորձի հիման վրա՝ ներկայացվել են մի շարք օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ, որոնք միտված են ՀՀ քրեական օրենսդրության լրամշակմանը, այն հաշվով, որպեսզի հնարավոր լինի իրականացել երեխաների սեռական ազատության և անձեռնմխելիության առավել համապարփակ քրեաիրավական պաշտպանություն:

Ատենախեսության առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ **(Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների կառուցվածքը, վիճակը և շարժընթացը ՀՀ-ում)** ուսումնասիրվել է ՀՀ-ում ընդհանուր հանցավորության ծավալում սեռական հանցագործությունների, երեխաների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների և հատկապես՝ երեխաների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների տեսակարար կշիռը, դրանց կառուցվածքը և միտումները: ՀՀ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տվյալների, համացանցային հասանելի վիճակագրական տվյալների, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի նյութերի հիման վրա՝ նախանշվել են մի շարք բացասական միտումներ, որոնք կարող են մոտ ապագայում հանգեցնել ինչպես ՀՀ-ում ընդհանրապես բռնի հանցավորության,

այնպես էլ սեռական բռնի հանցավորության և հատկապես անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների աճի:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **(Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտիվ հատկանիշների քրեաիրավական բնութագիրը)** բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում՝ **(Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտը)** քննարկվում է հանցագործության օբյեկտի ընդհանուր բնութագիրը և դրան առնչվող դասական և ժամանակակից հայեցակարգերը: Այս համատեքստում առավել հանգամանալից քննարկման է ենթարկվել սեռական հանցագործությունների, բռնի սեռական հանցագործությունների և անչափահասների (երեխաների) դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների օբյեկտը: Հանցագործության օբյեկտի ավանդական քառանդամ կառուցվածքից բացի, հեղինակն առանձնացնում է անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտի հնգանդամ կառուցվածքը՝ ներառելով նաև այս հանցագործությունների «ինտեգրացված օբյեկտի» նկարագիրը, քննարկվող հասարակական հարաբերություններն առավել խիստ պաշտպանության տակ առնելու նկատառումներով: Կատարված հետազոտության հիման վրա հիմնավորվում է ՀՀ քրեական օրենսգրքում «Երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործություններ» վերտառությամբ առանձին գլխի նախատեսման անհրաժեշտությունը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ **(Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները)** ուսումնասիրվել են քննարկվող հանցատեսակների արտաքին դրսևորման և դրանց տարրերի յուրահատկությունները: Մանրամասն ուսումնասիրվել են հանրորեն վտանգավոր արարքի, դրա հետևանքների, կատարման եղանակների և հանցագործության օբյետիվ կողմի այլ ֆակուլտատիվ հատկանիշների առանձնահատկությունները: Մասնավորապես քննարկվել են անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, հատուկ ուշադրություն է դարձվել բռնության տարբեր դրսևորումների ուսումնասիրությանը, անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական գործողությունների բովանդակությանը, դրանց եղանակներին, կատարման հանգամանքներին, իրադրությանը և այլն: Քննարկվել են անչափահասների բռնաբարության, նրանց նկատմամբ կատարվող սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ինչպես նաև բռնի անառակաբարո գործողությունների դրսևորումները, բռնություն գործադրելու, դրա սպառնալիքի և անօգնական վիճակն օգտագործելու հատկանիշ-

ները, բերվել են օրինակներ դատահիրավական պրակտիկայից: Այս հանցատեսակների դեմ քրեահիրավական պայքարի ուժեղացման նկատառումներով կարատվել են օրենսդրության փոփոխությանը և լրամշակմանը միտված առաջարկություններ:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **(Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների սուբյեկտիվ հատկանիշների քրեահիրավական բնութագիրը)** բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում՝ **(Բռնի սեռական հանցագործությունների սուբյեկտի առանձնահատկությունները)** մանրամասն ուսումնասիրվել են անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների սուբյեկտի առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվել ինչպես հանցագործության ընդհանուր սուբյեկտի, այնպես էլ սեռական հանցագործությունների հատուկ սուբյեկտի հատկանիշներին, ընդ որում քննարկվել են ինչպես պարտադիր, այնպես էլ ֆակուլտատիվ հատկանիշները: Ուսումնասիրվել են հանցագործության սուբյեկտի մեղսունակությանը վերաբերող, ինչպես նաև տարիքային, սեռային, ժողովրդագրական և այլ առանձնահատկություններ:

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ **(Բռնի սեռական հանցագործություններից տուժող անչափահասների տարիքին առնչվող որոշ հարցեր)** բացահայտվել են բռնի սեռական հանցագործություններից տուժող անչափահասների տարիքին առնչվող մի շարք առանձնահատկություններ, նշվել է, որ պետք է պարզել անչափահասների տարիքային սահմանները, հանցավորի կողմից դրանք գիտակցելու (ակնհայտության կամ նախապես հայտնի լինելու) օբյեկտիվ հնարավորության առկայութունը: Կարևորվել է այն հարցի հստակեցումը, թե ո՞ր չափանիշը պետք է դիտարկել որպես անչափահասի տարիքային սահմանների որոշման հիմք՝ նրա օրացուցային տարիքը, թե՞ արտաքին տեսքը: Նշվում է նաև, որ շատ դեպքերում, երբ երեխաների նկատմամբ սեռական հանցագործությունները կատարվում են նրանց ծանոթ անձանց, իսկ հաճախ էլ նաև ընտանիքի անդամների կողմից, տուժողի տարիքը հանցավորի համար ակնհայտ է, սակայն այն դեպքերում, երբ հանցագործությունը կատարվում է տուժողին անծանոթ անձի կողմից, վերջինիս տարիքի որոշման գործընթացն էականորեն բարդանում է՝ կապված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետ:

Սույն գլխի երրորդ պարագրաֆում՝ **(Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները)** նկարագրվել են քննարկվող հանցագործություններին ուղեկցող ներքին գործընթացները: Մանրակրկիթ ուսումնասիրվել են մեղքին, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակին,

շարժառիթներին և հույզերին առնչվող բազմաթիվ տեսական և գործնական հիմնահարցեր: Նշվել է, որ քննարկվող հանցատեսակների առումով, բացի կատարված արարքի հանրային վտանգավորությունը գիտակցելուց, հանցանք կատարած անձը պետք է գիտակցի նաև տուժողի անչափահաս կամ մանկահասակ լինելու հանգամանքը: Անչափահասի բռնաբարության, նրա նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ինչպես նաև բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով զուգորդված անառակաբարո գործողությունների կատարման պարագայում անձը ենթակա է պատասխանատվության միայն այն դեպքում, երբ հստակ գիտակցել է տուժողի անչափահաս կամ մանկահասակ լինելը: Դոկտրինալ մոտեցումների հիման վրա կատարվել է եզրահանգում, որ անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունները որպես կանոն կատարվում են սեռական բավարարում ստանալու նպատակով, սակայն կարող են լինել նաև այլ նպատակներ, ինչպես օրինակ անձին ցավ պատճառելու (սադիստական), նրան նսեմացնելու և այլն:

Ատենախոսության **եզրակացության** մեջ տեղ են գտել այն հիմնական եզրահանգումները և առաջարկությունները, որոնք կատարվել են աշխատանքի արդյունքում: Մասնավորապես.

1. Հարկ է նկատել, որ անչափահասների նկատմամբ կատարվող սեռական ոտնձգությունները համարվում են առավել վտանգավոր սեռական հանցագործություններ, սակայն հայրենական քրեական օրենսդրության մեջ դրանք առանձնացված չեն առանձին գլխով: Հանրավտանգ այս արարքները կամ հանդիսանում են սեռական հանցագործությունների որակյալ տեսակներ, կամ էլ նախատեսված են առանձին հոդվածներով: Ելնելով անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների մի շարք առանձնահատկություններից և առավել բարձր հանրային վտանգավորությունից, առավել նպատակահարմար կլիներ ՀՀ քրեական օրենսգրքում դրանք նախատեսել առանձին գլխով և սահմանել ավելի խիստ պատիժներ հանցագործությունների այս տեսակների համար կամ էլ հանցագործությունների այս խումբը տեղակայել ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխում (Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները): Առանձին գլխով սահմանելու պարագայում առաջարկում եմ հետևյալ վերտառությունը՝ Գլուխ…»Երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործությունները»:

2. ՀՀ քրեական օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել սեռական հացագործությունների հետևյալ բնորոշումը. «Սեռական հանցագործությունները հանցագործության սուբյեկտի կողմից սեփական կամ այլ անձանց սեռական պահանջմունքները բավարարելու կամ այլ շարժառիթներով կատարվող անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության

դեմ ուղղված հանրավտանգ արարքներ են, որոնք կոպտորեն ոտնահարում են հասարակական բարոյականության նորմերը, խոչընդոտում են անչափահասների և մանկահասակների բնականոն սեռական զարգացմանը և խախտում են անձանց միջև սեռական շփումների ձևավորված հարաբերությունները»:

3. Արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ սահմանված երեխաների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների իրավակարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա կարելի է կատարել մի շարք եզրահանգումներ, մասնավորապես.

- Արտասամանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությունների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց գերակշիռ մեծամասնությունը պատասխանատվություն է սահմանում ինչպես բռնաբարության, որպես բռնություն գործադրելով, դրա գործադրման սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով բնական սեռական հարաբերության, այնպես էլ սեռական բնույթի բռնի գործողությունների համար: Ասվածը վկայում է այն մասին, որ սեռական ագրեսիայի զոհեր կարող են հանդիսանալ թե՛ իգական և թե՛ արական սեռի ներկայացուցիչները, չնայած որոշ դեպքերում նախատեսված են բացառություններ:
- Ուսումնասիրված երկրների (օր.՝ ԳԴՀ-ի, Դանիայի, Ուկրաինայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի և այլն) քրեական օրենսգրքերում ոչ միշտ է տրվում սեռական բնույթի գործողությունների հստակ բնութագիրը կամ նկարագիրը, բավարարվելով միայն գնահատողական հասկացությունների օգտագործմամբ, ինչպես, օրինակ՝ «սեռական հարաբերություններ, որոնք տարբերվում են բնական սեռական ակտից», «սեքսուալ գործողություններ», «այլասերված արարքներ», «բռնություն գործադրելով անառակաբարո գործողություններ», «բռնի կերպով սեռական կրքերի բավարարում խաթարված եղանակով», «անօրինական բռնի սեռական ակտ» և այլն: Նման մոտեցումն անընդունելի է և կարող է հանգեցնել բարդությունների իրավակիրառ պրակտիկայում, նախադրյալներ ստեղծել օրենքի ոչ միատեսակ մեկնաբանության համար, խաթարել իրավական որոշակիության ապահովման սկզբունքը:
- Սեքսոլոգիայում սեքսուալ բնույթի գործողությունների միասնական հասկացություն գոյություն չունի, դրանք կարող են ամենաբազմազան բնույթ ունենալ, իսկ քրեական օրենսդրության մեջ նման անորոշ հասկացության կիրառումն անընդունելի է: Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում (ինչպես նաև նոր քրեական օրենսգրքի նախագծում) կատարել համապատասխան փոփոխություն՝ նշելով, որ սեռական բնույթի բռնի գործողությունները պետք է կապված լինեն տուժողի մարմնի մեջ սեռական ներթա-

փանցման հետ: Կարելի է նաև ներթափանցմամբ զուգորդված սեռական բնույթի բռնի գործողությունները նախատեսել որպես քննարկվող հանցագործության որակյալ տեսակ, քանզի ոչ բոլոր սեռական բնույթի գործողություններն են կապված տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցման հետ, օրինակ՝ լեսբոսության շատ դրսևորումներ կամ մանուալ սեքսի որոշ դրսևորումներ կապված չեն ներթափանցման հետ:

- Արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ, առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում այն դեպքերի համար, երբ սեռական բռնության զոհ են դառնում անչափահասները (երեխաները): Ընդ որում, ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից, նշված պատասխանատվությունը դիֆերենցվում է (այս մոտեցումը բնորոշ է հատկապես ԱՊՀ երկրների քրեական օրենսդրությանը): Որոշակի առումով անհասկանալի է ճապոնական և լեհական օրենսդիրների մոտեցումը, համաձայն որի՝ անչափահասներն առանձնացվում են որպես սեռական ագրեսիայից տուժողների առանձին կատեգորիա, սակայն նրանց դեմ կատարված սեռական հանցագործության համար պատժի խստացում չի նախատեսվում: Որոշ երկրների քրեական օրենսգրքերում, (օրինակ՝ Դանիայի, Նիդերլանդների, Շվեյցարիայի և այլն) սեռական հանցագործություններից տուժողների շարքում անչափահասները չեն առանձնացվում և նրանց դեմ կատարված սեռական բռնությունը որակվում է ընդհանուր հիմունքներով: Այս մոտեցումը ՀՀ քրեական օրեսդրության զարգացման համատեքստում ճիշտ համարվել չի կարող: Ընդհակառակը՝ պետք է առավելագույն տեսական և գործնական ջանքեր գործադրվեն, անչափահասներին սեռական բռնության ցանկացած դրսևորումից պաշտպանելու համար:
- Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության ուշագրավ առանձնահատկություններից է նաև այն, որ որպես բռնի սեռական հանցագործությունների որակյալ տեսակ սահմանվում է հանցանքը վերընթաց ազգակցական կապերն օգտագործելով կատարելը, ծնողի, որդեգրողի կամ այն անձի կողմից կատարելը, ում դաստիարակության կամ խնամքի ներքո է գտնվում երեխան, կամ ումից երեխան գտնվում է ծառայողական կամ աշխատանքային կախվածության մեջ: Համանման որակյալ տեսակ սահմանվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 138-ի և 139-ի երրորդ մասի առաջին կետով: Նշված ծանրացնող հանգամանքն ունի հետևյալ ձևակերպումը՝ «..տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն»: Այս ծանրացնող հանգամանքի նախատեսումը հույժ կարևոր է և արդարացված, սակայն կարծում ենք, այն պետք է վերաձևակերպվի: Առաջարկվում է, վե-

րոնշյալ ծանրացնող հանգամանքը ձևակերպել հետևյալ կերպ. «Տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի, վերընթաց ազգականի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն կամ ումից երեխան գտնվում է աշխատանքային կամ ծառայողական կախվածության մեջ»:

4. Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին ՀՀ-ում հանցավորության այս տեսակը ստացել է նոր որակներ, նոր դրսևորումներ ինչն անմիջականորեն կապված է տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և գաղափարախոսական փոփոխությունների հետ: ՀՀ-ում ընդհանուր հանցավորության միտումները բացասական բնույթ ունեն, ինչը, թերևս, օրինաչափ է՝ հաշվի առնելով բարդ սոցիալ-քաղաքական և տնտեսական իրավիճակը: ՀՀ-ում առավել հազվադեպ կատարվող սեռական հանցագործությունը սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու հանցատեսակն է (ՀՀ քր. օր. հոդված 140), իսկ առավել տարածվածը՝ սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ (ՀՀ քր. օր. հոդված 141): Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քր. օր. հոդված 141-ով նախատեսված հանցատեսակը անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործություն չէ, այնուամենայնիվ այն հանդիսանում է անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործություն և այս հանգամանքն ինքնին մտահոգիչ է, քանզի պետք է փաստել, որ ՀՀ-ում առավել տարածված սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունը անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործություն է: Հատկանշական է, որ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների և անառակաբարո գործողությունների հանցատեսակները ունեն գրեթե նույնական շարժընթաց և միտումներ: Այս հանգամանքը պատահական չէ, քանզի այս հանցատեսակներն ունեն բազմաթիվ ընդհանրություններ, հատկապես՝ երբ խոսքը վերաբերում է բռնությամբ զուգորդված անառակաբարո գործողությունների կատարմանը: ՀՀ ոստիկանության ԻԿ-ի կողմից տրամադրված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ կատարված սեռական հանցագործությունների գերակշիռ մեծամասնությունը կատարվում է գործազուրկների կողմից, ինչը վկայում է այս գործոնի առավել մեծ հանցածին նշանակության մասին, հատկապես բռնի և բռնի-սեռական հանցավորության առումով: Այսպես 2007-2016 թվականների ընթացքում սեռական հանցագործությունների 90%-ից ավե-

լին կատարվել է գործազուրկների կողմից: Այս հանգամանքը առավել քան մտահոգիչ է, և հիրավի մեծ ջանքեր պետք է գործադրվեն գործազրկության նվազեցման առումով, քանզի, հատկապես սեռական հանցագործությունների համատեքստում, այս հանցածին գործոնի ազդեցությունն ահռելի է:

5. ՀՀ-ում սեռական հանցագործություն կատարող անձանց սեռային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հանցագործությունների գերակշիռ մեծամասնությունը կատարվում է տղամարդկանց կողմից: Տարբեր տարիների կտրվածքով կանանց կողմից սեռական հանցագործությունների կատարման ցուցանիշները տատանվում են 0-10%-ի շրջանակներում, ընդ որում, վերջին տարիներին կանանց կողմից սեռական հանցագործությունների կատարման դեպքեր գրեթե չեն արձանագրվել: Այս հանգամանքը խիստ տարօրինակ է և մտահոգիչ, քանզի կարող է վկայել կանանց կողմից սեռական հանցագործությունների կատարման լատենտայնության աճի մասին: Ինչ վերաբերում է սեռական հանցագործություններ կատարող անձանց տարիքին, ապա հարկ է փաստել, որ առավել կրիմինալ ակտիվ տարիքային խումբը այս հանցատեսակների առումով՝ 18-24 տարեկաններն են, չնայաց, որոշ դեպքերում 30-49 տարեկանների կողմից կատարվել են ավելի շատ սեռական հանցագործություններ: Օրինակ՝ 2007 թվականին արձանագրված 40 սեռական հանցագործություններից 11-ը կատարվել է 18-24 տարեկան տարիքային խմբի կողմից, իսկ 14 հանցանք կատարվել է 30-49 տարեկանների կողմից: Սա, իհարկե բացառություն է, քանզի 10 տարվա կտրվածքով սեռական հանցագործությունների գրեթե կեսը կատարվել է 18-24 տարեկանների տարիքային խմբի կողմից, ինչը, թերևս, օրինաչափ է, հաշվի առնելով սեռական հանցագործությունների առաձնահատկությունները և դրանց կախվածությունը անձի ֆիզիկական, հորմոնալ և մի շարք այլ ֆիզիոլոգիական գործոններից: Ուսումնասիրելով ընդհանուր հանցավորության ծավալում սեռական հանցագործությունների, անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների, ինչպես նաև անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների տեսակարար կշիռը, տեսնում ենք, որ սեռական հանցագործությունները կազմում են ընդհանուր հանցավորության 0,4-0,7 %-ը: Սակայն մտահոգիչ է, որ անչափահասների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունները կազմում են ընդհանուր հանցավորության 0.3-0.5 %-ը: Այսինքն՝ կարելի է փաստել, որ սեռական հանցագործությունների մեծամասնությունը կատարվում է անչափահասների նկատմամբ: Ինչ վերաբերում է անչափահասների նկատմամբ կատարված բռնի սեռական հանցագործություններին, ապա դրանց ծավալը կազմում է ընդհանուր հանցավորության տեսակարար կշռի 0.1-0.2%-ը, սակայն, այս առումով ևս, նկատելի են բացասական միումներ, քանի որ, ընդհանուր առմամբ, նկատվում է

հանցավորության այս դրսևորման աճ: Հարկ է նկատել, որ ի տարբերություն ԱՊՀ մի շարք երկրների, որտեղ սեռական հանցագործությունների տեսակարար կշիռն ընդհանուր հանցավորության ծավալում կազմում է 2-4 %, ՀՀ-ում, ըստ պաշտոնական վիճակագրության, այս առումով պատկերն էապես և դրականորեն տարբերվում է, քանզի, ինչպես վերը նշվեց, սեռական հանցագործությունները կազմում են ընդհանուր հանցավորության 0.4-0.7 %-ը: Սակայն կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են մի շարք բացասական միտումներ, որոնք կարող են մոտեցնել հանցավորության այս դրսևորման ծավալը տարածաշրջանի այլ երկրների ցուցանիշներին:

6. Անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների ինտեգրացված օբյեկտը մարդու պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, սեռային օբյեկտը՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, տեսակային օբյեկտը՝ այն հասարակական հարաբերություններն են, որոնք խախտվում են ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների կատարմամբ, իսկ անմիջական օբյեկտը՝ առանձին հանցագործության զոհ դարձած կոնկրետ անչափահասի (անչափահասների) բնականոն սեռական զարգացման, սեռական անձեռնմխելիության կամ սեռական ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Անչափահասների նորմալ սեռական զարգացումը չի կարող դիտարկվել որպես երեխաների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների բացարձակ ինքնուրույն օբյեկտ: Այն անմիջականորեն փոխկապակցված է երեխաների կյանքի, առողջության, բարոյական և մտավոր զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների հետ, որոնք ըստ էության հանդիսանում են անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների ինտեգրացված օբյեկտներ: Բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների և բռնությամբ զուգորդված անառակաբարո գործողությունների պարագայում գրեթե միշտ անձը զրկվում է ազատ տեղաշարժման և իր գտնվելու վայրն ընտրելու հնարավորությունից, այսինքն ապօրինի զրկվում է ազատությունից (ՀՀ քր. օր. հոդված 133): Կարծում եմ, այս դեպքում անձի ազատության, պատվի և արժանապատվության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները պետք է դիտարկել որպես սեռական հանցագործությունների պարտադիր լրացուցիչ անմիջական օբյեկտ: Անչափահասների բնականոն ֆիզիկական հոգեկան և բարոյական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները չեն կարող դիտարկվել, որպես քննարկվող հանցագործությունների լրացուցիչ օբյեկտ:

Այս հասարակական հարաբերությունները հանդիսանում են երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործությունների հիմնական անմիջական օբյեկտ: Ասվածն ապացուցում է ՀՀ քրեական օրենսգրքում «Երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործություններ» վերտառությամբ առանձին գլխի նախատեսման անհրաժեշտությունը:

7. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 139-ի առաջին մասի դիսպոզիցիան անհրաժեշտ է վերախմբագրել հետևյալ կերպ՝ «Սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները, որոնք զուգորդվել են տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ և կատարվել են տուժողի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու՝ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով...»: Բռնաբարությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները պետք է համարել անօգնական վիճակն օգտագործելով կատարված նաև այն դեպքերում, երբ տուժողը տվյալ իրադրությունում զրկված է դիմադրելու հնարավորությունից: Հնարավոր են իրավիճակներ, երբ դիմադրությունն ուղղակի անիմաստ լինի և վտանգի տուժողի կամ այլ անձանց կյանքը կամ առողջությունը: Նման իրավիճակը կարելի է բնութագրել որպես իրադրութային անօգնական վիճակ, որն ավելի վտանգավոր է հատկապես անչափահասների առումով, ում հոգեկան և ֆիզիկական զարգացման մակարդակն էականորեն սահմանափակում է դիմադրելու ունակությունը:

8. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 138-ի չորրորդ մասում անհրաժեշտ է կատարել փոփոխություն և որպես «անօգնական վիճակի տարիք» սահմանել 14 տարեկանը: Տասնչորս տարին չլրացած անձանց ներքաշումը սեռական հարաբերությունների ոլորտ, անգամ վերջիններիս համաձայնությամբ, կարող է բացասական և անդառնալի հետևանքներ ունենալ նրանց ֆիզիկական, բարոյական և հոգեկան զարգացման վրա: Սա բխում է նաև մեր ազգային առանձնահատկություններից, խառնվածքից և հայկական դաստիարակության յուրահատկություններից:

9. Բռնաբարության ավարտման պահի ճիշտ որոշման հարցն ունի սկզբունքային նշանակություն, քանզի դրա տեղափոխումն ավելի վաղ փուլ (սեռական օրգանների հպման, հեշտոցի նախամուտք սեռական օրգանի ներթափանցման և այլն), էականորեն սահմանափակում է բռնաբարությունից կամովին հրաժարման հնարավորությունը: Նման հնարավորություն պետք է նախատեսել մինչև տղամարդու սեռական օրգանը կնոջ հեշտոցի մեջ մտցնելու պահը: Ընդ որում, այս մոտեցումը պետք է տարածել նաև սեքսուալ բնույթի գործողությունների առումով, որոնք, պետք է ուղեկցվեն տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ: Այսինքն, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմի ավարտման պահ պետք է

համարել այն պահը, երբ տեղի է ունենում սեռական ներթափանցում, որը կարող է կապված լինել ինչպես սեռական օրգանի, այնպես էլ այլ իրերի կամ առարկաների միջոցով մարմնի մեջ սեռական ներթափանցման հետ: Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների ավարտման պահը ևս չպետք է կապված լինի հանցավորի սեռական կրքերի բավարարման, կամ սեքսուալ բնույթի գործողությունների փաստացի ավարտման պահի հետ: Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ չպետք է համարվեն այն արարքները, որոնք կապված չեն ներթափանցման հետ:

10. Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսել բռնի անառակաբարո արարք կատարելու հանցակազմը: Բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև տուժողի անօգնական վիճակն օգտագործելով անառակաբարո գործողություններ կարող են կատարվել նաև չափահասների նկատմամբ, մինչդեռ, առկա իրավակարգավորման պարագայում, այդ արարքներին չի տրվում որևէ քրեաիրավական գնահատական:

11. Բռնի սեռական հացնագործությունների սուբյեկտը հանցանքը կատարելու պահին տասնչորս տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձն է, իսկ բռնի անառակաբարո գործողությունների պարագայում՝ տասնվեց տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը: Այս առումով կարելի է նկատել, որ բռնի անառակաբարո գործողությունների սուբյեկտի սահմանման պարագայում օրենսդիրը դրսևորել է ոչ այնքան արդարացի մոտեցում: Այս դեպքում ևս որպես հանցագործության սուբյեկտի տարիք պետք է սահմանել տասնչորս տարեկանը:

12. Քրեական իրավունքի տեսության մեջ առավել տարածված մոտեցման համաձայն բռնաբարության սուբյեկտ կարող է հանդիսանալ բացառապես արական սեռի ներկայացուցիչը, իսկ իգական սեռի ներկայացուցիչը կամ սեռական հարաբերություն ունենալու ունակությունից զրկված անձիք կարող են հանդես գալ բացառապես հանցակցի դերում: Սխալ պետք է համարել այն հեղինակների կարծիքը, ովքեր գտնում են, որ բռնաբարության համակատարող կարող է լինել նաև կինը կամ իմպոտենտը, քանզի վերջիններս չեն կարող կատարել բռնաբարության օբյեկտիվ կողմը կազմող բուն արարքը:

13. Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունները սուբյեկտիվ կողմից կարող են կատարվել բացառապես ուղղակի դիտավորությամբ: Հանցանք կատարած անձը պետք է հստակ գիտակցի, որ իր կողմից կատարվող արարքներն ուղղված են անչափահասի, իսկ որոշ դեպքերում՝ մանկահասակի դեմ:Այս հանցատեսակների կատարման պարագայում հանցավորը գիտակցելով անչափահասի կամ մանկահասակի բռնաբարության, նրա նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գոր-

ծողությունների, ինչպես նաև բռնությամբ զուգորդված անառակաբարո գործողությունների բարձր հանրային վտանգավորությունը, միևնույնն է նպատակամղված ձգտում է կատարել այդ արարքները: Անչափահասների դեմ ուղված բռնի սեռական հանցագործությունները որպես կանոն կատարվում են սեռական բավարարում ստանալու նպատակով, սակայն կարող են լինել նաև այլ նպատակներ, ինչպես օրինակ անձին ցավ պատճառելու (սադիստական), նրան նսեմացնելու և այլն: Շարժառիթները կարող են տարբեր լինել՝ սեքսուալ, շահադիտական, վրեժի խանդի և այլն: Հարկ է փաստել սակայն, որ հանցագործության որակման վրա սուբյեկտիվ կողմի նշված ֆակուլտատիվ հատկանիշները չեն ազդում, սակայն պետք է հաշվի առնվեն պատժի անհատականացման գործընթացում:

Ատենախոսական հետազոտության վերջում ներկայացված է **օգտագործված գրականության ցանկը**, որը ներառում է օգտագործված նորմատիվ իրավական ակտերը և համացանցային նյութերը, մենագրությունները, ատենախոսությունները, դասագրքերը, գիտական հոդվածները, ինչպես նաև ուսումնասիրված դատական գործերի համարները:

Ատենախոսական հետազոտության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրատարակված աշխատանքներում.

1. Կարապետյան Է. Անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը և դասակարգումը // Պետություն և իրավունք №4(78), Երևան, 2017, էջեր 17-27:
2. Կարապետյան Է. Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտիվ կողմին առնչվող որոշ հիմնահարցեր// Դատական իշխանություն №07-08/229-230, Երևան, 2018, էջեր 43-54:
3. Կարապետյան Է. Անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների համար սահմանված քրեական պատասխանատվության առանձնահատկությունները արտասահմանյան երկրների օրենսդրությամբ // Պետություն և իրավունք №1(79), Երևան, 2018, էջեր 109-119:
4. Կարապետյան Է. Բռնի սեռական հանցագործություններից տուժող անչափահասների տարիքին առնչվող որոշ հարցեր // Արդարադատություն №5/46, Երևան, 2018, էջեր 31-35:
5. Կարապետյան Է. Անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների օբյեկտը // Արդարադատություն №4/45, Երևան, 2018, էջ 23-31:
6. Կարապետյան Է. Բռնի սեռական հանցագործությունների սուբյեկտի առանձնահատկությունները // Դատական իշխանություն №1-2/235-236, Երևան, 2019, էջեր 23-29:

ЭДГАР СУРЕНОВИЧ КАРАПЕТЯН

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА НАСИЛЬСТВЕННЫХ ПОЛОВЫХ ПРЕСТУПЛЕНИЙ В ОТНОШЕНИИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования обусловлена тем фактом, что, несмотря на наличие многочисленных и всеобъемлющих внутренних и международных правовых гарантий, права детей нарушались и продолжают нарушаться во всем мире, совершаются многие преступления против детей, в том числе против их половой свободы и неприкосновенности. Насильственные половые преступления против детей являются одним из самых жестоких, безжалостных и отвратительных актов человеческого поведения и традиционно классифицируются как одно из самых латентных преступлений. Исследование статистики преступности в Республике Армения показывает, что в последние годы наблюдается тенденция роста насильственных половых преступлений против детей, что является очень негативным и тревожным процессом.

Существует множество теоретических и практических вопросов, пробелов в законодательстве с точки зрения правильной квалификации насильственных половых преступлений против детей и разграничения их от аналогичных преступлений. В связи с этим следует отметить, что многие дефекты и недочеты действующего уголовного законодательства устранены в проекте нового Уголовного кодекса Республики Армения. Однако, по моему мнению, существует ряд уголовно-правовых норм, которые необходимо улучшить и усовершенствовать, с тем чтобы иметь возможность осуществлять всеобъемлющую уголовную защиту половой свободы и неприкосновенности несовершеннолетних.

В связи с высокой общественной опасностью и распространенностью насильственных сексуальных преступлений против несовершеннолетних, необходимо разработать эффективные правовые механизмы для борьбы с ними, а также разработать ряд правовых норм в уголовном законодательстве РА. Актуальность рассматриваемой темы также

обусловлена тем фактом, что многие теоретические вопросы, связанные с насильственными половыми преступлениями в отношении несовершеннолетних, являются весьма противоречивыми, поэтому необходимо обсудить и переосмыслить их в контексте современных тенденций развития уголовного права и правоприменительной практики.

Научная новизна диссертации заключается в том, что впервые в Республике Армения была предпринята попытка всесторонне изучить уголовно-правовые проблемы насильственных половых преступлений против несовершеннолетних (детей). На основе локализации положительного зарубежного опыта, а также статистических данных и правоприменительной практики разработаны рекомендации по усовершенствованию уголовно-правовых норм с целью всесторонней защиты половой свободы и неприкосновенности детей.

Теоретическая и практическая значимость исследования заключается в том, что результаты диссертации могут быть применены как в теоретических, так и в практических целях. Результаты этой работы могут быть применены для преподавания курса "Уголовное право", а также могут быть полезны для изучения проблем половых преступлений против несовершеннолетних (детей), а также для тех, кто интересуется теоретическими и практическими вопросами половых и насильственных преступлений. Тезисы, основные теоретические принципы и практические выводы могут быть использованы при совершенствовании уголовного законодательства, а также при разработке нового уголовного кодекса РА. Результаты исследования могут быть использованы в качестве практического руководства по уголовно-правовой борьбе с насильственными половыми преступлениями против несовершеннолетних.

Диссертация состоит из введения, трех глав, восьми параграфов, заключения и списка использованной литературы.

EDGAR SUREN KARAPETYAN

CRIMINAL-LEGAL CHARACTERISTICS OF VIOLENT SEXUAL CRIMES AGAINST MINORS IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

The actuality of the research topic is due to the fact that, despite the existence of numerous and comprehensive domestic and international legal guarantees, the rights of children have been violated and continue to be violated throughout the world, many crimes are committed against children, including against their sexual freedom and inviolability. Violent sexual crimes against children are one of the most brutal, ruthless and abhorrent acts of human behavior and are traditionally classified as one of the most latent crimes. A study of crime statistics in the Republic of Armenia shows that in recent years there has been a growth trend in violent sexual crimes against children, which is a very negative and alarming process.

There are many theoretical and practical issues, gaps in the legislation in terms of the correct qualification of violent sexual crimes against children and distinguishing them from similar crimes. In this regard, it should be noted that many defects and shortcomings of the current criminal law have been eliminated in the draft new Criminal Code of the Republic of Armenia. However, in my opinion, there are a number of criminal law norms that need to be improved in order to be able to carry out comprehensive criminal protection of sexual freedom and the inviolability of minors.

Due to the high public danger and the prevalence of violent sexual crimes against minors, it is necessary to develop effective legal mechanisms to combat them, as well as develop a number of legal norms in the criminal legislation of the Republic of Armenia. The relevance of this topic is also due to the fact that many theoretical issues related to violent sexual crimes against minors are very controversial, therefore, it is necessary to discuss and rethink them in the context of current trends in the development of criminal law and law enforcement practice.

The scientific novelty of the thesis is that for the first time in the Republic of Armenia an attempt was made to comprehensively study the

criminal law problems of violent sexual crimes against minors (children). Based on the localization of positive foreign experience, as well as statistical data and law enforcement practice, recommendations have been developed to improve criminal law with the aim of comprehensively protecting sexual freedom and inviolability of children.

The theoretical and practical significance of the study lies in the fact that the results of the dissertation can be applied both for theoretical and practical purposes. The results of this work can be used to teach the course "Criminal Law", and can also be useful for studying the problems of sexual crimes against minors (children), as well as for those who are interested in theoretical and practical issues of sexual and violent crimes. Abstracts, basic theoretical principles and practical conclusions can be used to improve the criminal legislation, as well as to develop a new criminal code of the Republic of Armenia. The results of the study can be used as a practical guide to prevent violent sexual crimes against minors.

The dissertation consists of an introduction, three chapters, eight paragraphs, a conclusion and a list of used literature.